Լիլիա Ավանեսյան
Պատմական գիտությունների թեկնածու
Հայաստանի պատմության թանգարան
lilia.a65@ mail.ru

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՆԿՎԱԾԻ ԵՎ ԳՈՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԸՍՏ ՀՊԹ ՆՅՈՒԹԵՐԻ)*

Հիմնաբառեր: Անկված, գորգ, կարպետ, մետաքս, առևտուր, վաճառական, համքարություն:

Անի քաղաքի 13-րդ դարասկզբի անկվածի նմուշներ

Հայաստանի պատմության թանգարանի (այսուհետ՝ ՀՊԹ) հավաքածուի մեջ առանձնահատուկ տեղ են գրավում Անի քաղաքից հայտնաբերված 13-րդ դարասկզբի թանկարժեք անկվածի[1] նմուշները և 16–18-րդ դարերի Սյունիք-Արցախի ու Վան-Վասպուրականի արժեքավոր գորգերը:

Անիի անկվածի նմուշներն ու բրդյա կարպետի հատվածը նկարագրել և ուսումնասիրել են մի շարք նշանավոր գիտնականներ, այդ թվում Հ. Օրբելին, Բ. Առաքելյանը, Վ. Աբրահամյանը, Հ. Ջանփոլադյանը, Ա. Ժամկոչյանը և ուրիշներ (Орбели 1910, 34–39: Առաքելյան 1958, 278–282: Աբրահամյան 1956, 181–183: Джанполадян 1972, 46–52: Ժամկոչյան 1992, 81–85): Ե. Մուշեղյանի կողմից կազմված Անի քաղաքից հայտնաբերված առարկաների հաշվառման ցուցակի համաձայն մանածագործական առարկաների քանակը քսանն է (Մուշեղյան 1982, 103–105): Մեր ուշադրության կենտրոնում դրանցից չորսն են՝ երեխայի մետաքսյա զգեստը (ՀՊԹ, Հ 123–1140), ոսկեթել ասեղնագործությամբ շղարշը (ՀՊԹ, Հ 123–1121), մուգ դարչնագույն թավշյա կտորի հատվածը (ՀՊԹ, Հ 123–1128), որը գտնվել է 1908 թ. Ծաղկոցաձորի քարանձավային դամբարանից, և մուգ կարմիր մետաքսյա կտորի հատվածը (ՀՊԹ, Հ 123–1129), որը գտնվել է 1909 թ. Անիի միջնաբերդի նկուղներից:

Հ. Օրբելին, նկարագրելով աղջկա զգեստը, նշում է, որ զգեստն ունի «չեսուչի գույն» (նկ. 1ա, 1բ): Հավելենք, որ «չեսուչի» տերմինը առաջացել է չինական՝ «zu-

---

* Ստացվել է 27. 05. 2022 թ., ուղարկվել է գրախոսման 01. 06. 2022 թ., ընդունվել է տպագրության 05. 08. 2022 թ.:

[1] 1. Անկուած՝ 1. հիւսուածք, գործուածք, բանուածք, 2. Ընդելուզված, ասեղնագործված իր, Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, հատոր 1, Երևան, 1944, էջ 134:

2. Անկված՝ 1. գործվածք, հյուսվածք, բանվածք, 2. ասեղնագործված բան, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1969, էջ 104:

3. Անկուած՝ 1. հյուսվածք, գործվածք, բանվածք, 2. ընդելուզված՝ ասեղնագործ իր, Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 63:

osicho՛u» բառից: Այդպես են անվանում ոսկե փայլով, կաթնաշագանակագույն երանգով, վայրի բոժոժից ստացվող մետաքսը: «Չեսուչի» մետաքսից պատրաստում էին կտավահյուս անկված, որի մանրաթելերը չեն ենթարկվում բարդ տեխնոլոգիական մշակման: Միևնույն ժամանակ օժտված են մետաքսին հատուկ հատկանիշներով՝ խտությամբ և ամրությամբ, առանձնահատուկ բանվածքով և երանգով, ջերմակարգավորման ընդունակությամբ, նրբազգացողությամբ և հակալերգիկ հատկությամբ, օդաթափանցիկությամբ, խոնավությունը ներքաշելու և չոր մնալու հատկությամբ, էլաստիկությամբ և այլն (Николаева 2017): «Չեսուչի» կամ չինական՝ «zuosicho՛u» մետաքսի հայրենիքը Չինաստանն է, իսկ տարատեսակներից «չեսուչիտուսսայի» հայրենիքը, ըստ նշանավոր գիտնական Ա.Իերուսալիմսկայայի, Բենգալիանէ (Иерусалимская 2005, 44):

Ուշագրավ է նաև 1908թ. Ծաղկոցաձորի քարանձավային դամբարանից հայտնաբերված ոսկեթել ասեղնագործությամբ շղարշի վրայի երկու կենդանու պատկերը (Орбели 1910, 36–37; Джанполадян 1972, 46–52): Ըստ Ե.Մուշեղյանի, պատկերված են իրար դիմաց կանգնած արու և էգ առյուծներ (Մուշեղյան 1982, 103), իսկ Բ.Առաքելյանի կարծիքով՝ հովազ և առյուծ (Առաքելյան 1958, 280–281): Մեզ համար ընդունելի է Հ.Օրբելու կարծիքն առ այն, որ շղարշի վրա ասեղնագործված են առյուծի ու վագրի պատկերներ: Պետք է ասել, որ կենդանիների դիմահայաց դասավորությունը, աջից՝ առյուծը, ձախից՝ վագրը, դրանց՝ իրար հակադրված լինելու գաղափարն է կրում (Орбели 1910, 36–37: Անի 2015, 166): Պատահական չէ, որ առյուծը (հովազը), որպես Անիի զինանշան (Մաթևոսյան 1994, 36–37), տեղադրվել է արևածագի ուղղությամբ, իսկ վագրը՝ մայրամուտի ուղղությամբ, «վտանգավոր» համարվող ձախ կողմում:

Մուգ դարչնագույն մետաքսից պատրաստված թավշյա կտորի պահպանված հատվածը (ՀՊԹ, Հ 123–1128) (նկ.2) ունի բարդ՝ հանգուցավոր թավշի բանվածք: Վրան միմյանց զուգահեռ շատ խիտ դասավորված են երեք հորիզոնական գծեր, երկու կողմից S-աձև նշաններով (Մուշեղյան 1982, 104):

Միջնաբերդի նկուղից հայտնաբերված մուգ կարմիր թանկարժեք կտորը (ՀՊԹ, Հ 123–1129) մետաքսից է, նույնպես ունի բարդ բանվածք, վրան խիտ գործված են չորս շարք փոքրիկ քառակուսիներ (Մուշեղյան 1982, 104) (նկ.3): Տեղին է հիշել Ն.Մառի այն դիտարկումը, որ Անի քաղաքի մասնավոր տների ներսույթի պատերը հարդարված են եղել թանկաժեք կտորներով ու գորգերով (Марр 1939, 197): Հայկական մանածագործական և գորգագործական արվեստի մասին մասնակի պատկերացում է տալիս 14–15-րդ դարերի մանրանկարչությունը: Օրինակ՝ Ս.Արճիշեցու (13–14-րդ դարեր), Հովսիան Բերկրեցու (14-րդ դար), Գրիգոր Սյունեցու (14-րդ դար), Ռստակես Խիզանեցու (14–15-րդ. դարի սկիզբ), Թումա Ոստանեցու (15-րդ դար), Հովհաննես Խիզանեցու (14–15-րդ դարի սկիզբ) և այլոց նկարազարդ Ավետարաններում պատկերված են թանկարժեք անկվածի ու գորգերի նմուշներ: 11–15-րդ դարերի մատյաններում բազմաթիվ են ծածկոցների, վարագույրների, հագուստի, գորգերի և այլնի պատկերները (Գևորգյան 1973, 18, XXV–XXVI): Մեզ են հասել նաև հայկական միջնադարյան ձեռագիր մատյանների կազմերի պատկերազարդ կտորները (Kyurkchyan 2016, 1–190), որոնք միջնա-

դարյան հայկական մանածագործական արվեստի փաստացի վկայությունն են: Հայկական կենցաղում գորգերն ու անկվածը այնպիսի ներգրավվածություն ունեին, որ շրջակա տարածությունը անկարող էին պատկերացնել առանց այդ գործվածքների: Դրանք մեզանում սովորական երևույթ էին: Այդ պատճառով էլ մանրանկարներում հատուկ կամ կանխամտածված չէր գործվածքի պատկերումը: Նկարիչները տեսարաններում առկա ուղղահայաց և հորիզոնական տարածությունները կազմակերպում էին իրենց իրականությանը համապատասխան (կախում էին պատից, դրանով ուղղահայաց հարթություններ ստեղծում կամ փռում հատակին): Չենք բացառում, որ Անիից գտնված թանկարժեք կարմիր մետաքսյա կտորի հիշատակած նմուշը կարող էր պաստառի հատված լինել :

Հ. Ջանփոլադյանը և Ա. Սմիրնովը, անդրադառնալով 13-րդ դ. Պովոլժիեի Մեծ Բուլղար քաղաքի հայ համայնքի կյանքին, խոսում են հայկական 113 գերեզմանոցներից հայտնաբերված թանկարժեք դիպակի, մետաքսյա կտորների, գորգերի պահպանված հատվածների մասին, որոնք զուգահեռներ ունեն Անիում արտադրված անկվածի նմուշների հետ (Джанполадян 1972, 47): Ա. Սմիրնովը եզրակացնում է, որ գերեզմանատանը թաղված են Հայաստանից Պովոլժիե եկած հարուստ վաճառականները (Смирнов 1958, 343): Դեռևս 10-րդ դարի արաբ ճանապարհորդ Իբն-Ֆադլանը, նկարագրելով բուլղարների թագավորի արքայական վրանը, նշում է, որ այն ամբողջովին ծածկված է հայկական գորգերով (Ибн- Фадлан 1939, 73): Հնագիտական նյութերը վկայում են, որ 13–14-րդ դարերում Բուլղար քաղաքի պատերից դուրս եղել է հայկական առևտրաարհեստավորաց թաղամաս, որտեղ արտադրում էին գորգեր ու կտորներ, և որը, դառնալով Ոսկե Հորդայի առևտրական բնակավայրերից մեկը, զարգանում ու ծաղկում էր (Хачикян 2014, 11–12):

Սյունիք-Արցախի և Վան-Վասպուրականի 16 – 18-րդ դարերի գորգեր

Հայկական գորգարվեստում առանձնահատուկ են 16–18-րդ դարերի գորգերը, որոնց գեղարվեստական նկարագիրն ու որակական հատկանիշները հուշում են, որ դրանք պատրաստվել են պատվերով, հատուկ արհեստանոցներում, որտեղ աշխատում էին թել մանողներն ու ներկարարները, նկարիչներն ու գորգագործ վարպետները: Հայաստանում բրդյա գործվածքների արտադրությունն ունի հնագույն պատմություն և պայմանավորված է զարգացած անասնապահական տնտեսությամբ ու բարձրորակ բրդի և բրդյա գործվածքների արտադրությամբ: Օրինակ, Արցախում գորգերը հյուսվում էին տեղական հումքից, որը մեծ համբավ ուներ Առաջավոր Ասիայի գորգարտադրող շրջաններում: Դեռևս 13–14-րդ դարերում հայտնի «վիշապագորգերը» հունգարացի նշանավոր ազգագրագետ Կ. Գոմբոշը համարում է արցախյան, իսկ դրանց ստեղծման ժամանակաշրջանը, ըստ նրա, համընկնում է սելջուկների, մոնղոլների, թյուրքական տարբեր ցեղերի հարձակման հետ, երբ հուժկու հարվածներից Հայաստանը հայտնվեց կործանման եզրին: Հեղինակի համոզմամբ հենց թշնամու հավաքական կերպարում վիշապի պատկերացումն է ընկած վիշապագորգերի ստեղծման հիմքում (Гомбош 1978, 4):

ՀՊԹ գորգերի հավաքածուի մեջ առանձին խումբ են կազմում 16–18-րդ դարերի Սյունիք-Արցախի և Վան-Վասպուրականի գորգերը (ՀՊԹ, Ա 8968, 10101/1,

10101/2, 10101/4, 10101/6, 10101/7, 11767): Հայկական գորգարվեստը հայկական նյութական մշակույթի բաղկացուցիչ և անբաժանելի մասն է: Գորգերի երկրաչափական զարդաձևերը, բուսական զարդամոտիվները, կենդանակերպ, թռչնակերպ ու մարդակերպ պատկերները մեր գորգարվեստի բնութագրական հատկանիշներից են: Գորգերի հորինվածքների, գեղարվեստական դրվագների, զարդաձևերի իմաստաբանական վերլուծությունը բացահայտում է դրանց գաղափարական սերտ կապը հայոց թե՛ նախաքրիստոնեական, թե՛ քրիստոնեական ժամանակաշրջանների նյութական ու հոգևոր մշակույթի, այդ թվում հավատալիքների, պաշտամունքի, ծեսերի հետ: Գորգը հայոց եկեղեցում կրոնածիսական և իշխանության խորհուրդը կրող կարևոր առարկաներից է եղել: Օրինակ՝ այդ մասին 17-րդ դարի պատմիչ Ա. Դավրիժեցին վկայում է, որ 1620 թ. Մովսես Սյունեցի վարդապետը[2], բողոքելով Մելիքսեթ կաթողիկոսի[3] անօրինությունների դեմ, վերջինիս ուղարկում է իր վարդապետական իշխանության նշանները՝ փիլոնը, գավազանը և գորգը (Դավրիժեցի 1988, 232):

Հայկական գորգարվեստի զարգացման փուլերից մեկը տեղի է ունենում 16–18-րդ դարերում: Արցախում խավով և անխավ գործվածքների արտադրության վերելքը, հավանաբար, պայմանավորված էր Հայոց Աղվանից կաթողիկոսարանի ստեղծման (1555 թ.) և Խամսայի մելիքությունների գոյության (15–19-րդ դարի սկիզբ) հետ: Տեղին է հիշել Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի կողմից Հայոց եկեղեցիների ներքին կառուցվածքի նկարագիրը: Ըստ հեղինակի՝ հայոց եկեղեցիները մինչև 20-րդ դարի սկիզբը ամբողջովին ծածկված էին գորգերով և բարձերով (Օրմանեան 1993, 194): Արցախում եկեղեցու, իշխանական կառավարման ու վաճառականության դերի բարձրացումը (16-րդ դարից մինչև 19-րդ դարի սկիզբ) նպաստավոր պայմաններ ստեղծեց և հանդիսացավ կարևորագույն գործոն՝ գորգերի և անկվածի արտադրության կազմակերպման ու իրացման համար:

Այդ ժամանակաշրջանի գործվածքներից է 17-րդ դարի «Սումախ» տիպի կարպետը (ՀՊԹ, Ա 11767, բուրդ, 192×174սմ) (նկ. 4): Կարպետի կարմիր դաշտի երկայնքով տեղադրված են հորիզոնական ձգվածությամբ մեդալիոններ՝ կեռազարդ կենտրոնով և չորս կողմից դեպի կենտրոնն ուղղված խաչերով: Դաշտի աջ և ձախ կողմերում կանոնավոր դասավորված են զարդապատկերներով հարդարված սպիտակ ութանկյուններ և հորիզոնական տեղադրությամբ, մեկընդմեջ, իրար հաջորդող կենաց ծառի ոճավորված պատկերներ: Նշենք, որ «Սումախ» տիպի արցախյան կարպետների խումբը աչքի է ընկնում իր գունապնակով՝ բոլորի դաշտը ներկված է կարմիր գույնով: Տեղին է հիշել, որ նախկինում Արցախի գորգերն ու կարպետները ներկվում էին որդան կարմիրի և տորոնի խառնուրդից ստացված ներկով (Исаев 1932, 63): Կարմիրը, հավանաբար, ստանում էին նաև Պարսկաստանից ներմուծվող սումախից: Ենթադրում ենք, որ սումախից ստացված կարմիրն է տվել կարպետներին «Սումախ» անվանումը, ինչպես նաև համարում ենք,

---

2 Հետագայում դարձավ Ամենայն հայոց կաթողիկոս՝ գահակալելով Մովսես Գ Տաթևացի անունով (1826–1832):

3 Զուգաթոռ կաթողիկոս:

որ այդ կարպետների պատրաստման հայրենիքը հենց Արցախն է: Կարծում ենք, որ նման հորինվածքով ու կարմիրով ներկված այս կարպետը հայերի հետ միասին Արցախից է տեղափոխվել Շամախի, որտեղ «Սումախ» կարպետի մեծաքանակ արտադրությամբ սկսում են զբաղվել նաև լեզգիները: Այստեղ գունային համադրությունը ենթարկվում է փոփոխության և կարմիրը այլևս չի գերակշռում: Իսկ Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուի 19–20-րդ դարի սկզբի արցախյան «Սումախ» տիպի կարպետները կարմիրի գերակայությամբ են:

17-րդ դարի «Ձրաբերդ» տիպի «Արծվագորգը» (ՀՊԹ, Ա 10101/1, 400×200սմ, բուրդ, 1դմ² 1184) (նկ. 5) ունի վառ գույների ներդաշնակ համադրությամբ, զարդապատկերների արտահայտչականությամբ հորինվածքային բարդ կառուցվածք: Կարմիր հիմնադաշտի ուղղահայաց կենտրոնագծով տեղադրված են արևի գաղափարակիր պատկերներ, որոնց պատկերագրությունը հայտնի է Հայկական լեռնաշխարհի, Միջագետքի, Եգիպտոսի, Իրանի հնագույն կոթողներից: «Արծվագորգի» գլխավոր զարդապատկերը՝ արծվի թևերի նմանությամբ տեղադրվում է հորինվածքի կենտրոնում՝ արևի վարդակի վերին և ստորին հատվածներում և հիշեցնում է արևի հնագույն աստվածներ՝ Ռայի, Հորուսի, Խալդիի, Ահուրա-Մազդայի թևավոր խորհրդանշանը: Արծվի կապը երկնային աստվածների հետ իր արտահայտությունն է գտել քրիստոնեական խորհրդաբանության մեջ. արծիվը Հովհաննես ավետարանչի խորհրդանշանն է: Արևի մեծ վարդակները ամփոփված են աղեղնաձև զարդաշերտերի մեջ, որոնցում տեղադրված են զույգ կարիճների դիմահայաց պատկերներ: Վանի թագավորության Ք.ա. 9–6-րդ դարերի կնիքների վրա կարիճը, որպես արևի ուղեկից և պտղաբերության խորհրդանիշ, պատկերված է արևի ու ծառի ստորին հատվածում: Կարիճի պատկերները բազմաթիվ են Հին աշխարհի, հատկապես Ուրի հուշարձանների վրա: 16–20-րդ դարի սկզբի Վասպուրականի և Սյունիք-Արցախի գորգերի վրա կարիճը նախաքրիստոնեական պատկերացումների համաձայն շարունակում է պատկերվել արևի, ծառի, բամբակենու, շուշանի կողքին և կապվում է արևապաշտության և միհրապաշտության հետ, որը դարեր շարունակ լայն տարածում ուներ Հայաստանում: Գորգի գեղարվեստական նկարագիրը եզրափակվում է շքեղ զարդագոտիով:

16–17-րդ դարերի «Ծաղկագորգի» (ՀՊԹ, Ա 10101/6, 530×230սմ, բուրդ,1դմ² 1056) (նկ. 6) ամբողջ մակերեսը հարդարված է արևի վարդակներով, արմավենյակներով և ծաղկաճյուղերով: Լայն եզրագոտին հարդարված է ծաղկաճյուղերով ու ոճավորված շուշաններով: Կապույտ հիմնադաշտի վրա կանոնավոր տեղադրված են մեծ ու փոքր ծաղկանախշեր, վարդակներ, ծաղկաճյուղեր: Լայն շրջագոտու ներսում մեծ խաչաձև հիմքով ծաղկանախշեր և ալիքաձև թեքությամբ դասավորված ճյուղեր են:

17–18-րդ դարերի Վասպուրականի գորգերը (ՀՊԹ, Ա 8968, 10101/2) դասվում են արևի, կենաց ծառի, ֆանտաստիկ կենդանակերպ պատկերներով գորգերի շարքին: ՀՊԹ, Ա 8968 (337 × 166 սմ բուրդ, բամբակ, 1դմ² 1088) (նկ. 7) գորգն ունի «Գուհար» հայտնի գորգի կենդանակերպ ոճավորմամբ պատկերներ: Այն ամբողջական չէ. կազմված է իրար կցված մասնակի հատվածներից: Գորգադաշտի վրա

արևի նշաններով ճառագայթաձև վահանն է, կենաց ծառի և կարիճակերպ վերացարկված պատկերներով, կեռազարդ նախշերով: 17–18-րդ դարերի այս գորգի նույն, բայց ամբողջական օրինակներից մեկը գտնվում է Հայաստանից դուրս՝ մասնավոր հավաքածուում (Gantzhorn 1998, abb 479a):

Վասպուրականի 17-րդ դարի մեդալիոնավոր գորգի (ՀՊԹ, Ա 10101/2, 460 × 205սմ, բուրդ, 1դմ² 783) (նկ. 8) երկայնքով տեղադրված են հորինվածքային մեծ դրվագներ կենաց ծառի, արմավենյակի, կարիճակերպ կենդանու ոճավորված պատկերներով, զույգ օձանախշերով (Пиотровский 1955, 56–57): Վասպուրականի գորգերի կարիճակերպ պատկերները, ինչպես նշեցինք, իմաստաբանական առումով կապվում են արևի ու կենաց ծառի գաղափարների և պաշտամունքի հետ: Նման ոճավորմամբ ծառի, կարիճի խայթով ֆանտաստիկ կենդանիների պատկերներով կնիքներ են գտնվել Կարմիր բլուրի ամրոցից (ՀՊԹ, Հ 2010–153): Թեյշեբաինի ամրոցի №28 պահոցից հայտնաբերված կարիճակերպ աստվածության կավե արձանիկը նման է Ուրի թագավորական դամբարանում գտնված նմանակերպ պատկերներին (Пиотровский 1952, 24): Կարիճակերպ էակները, ծառն ու թևավոր արևը հայտնի են նաև ասորական կնիքների պատկերներից (Пиотровский 1950, 77–79): Գ. Սրվանձտյանցը գրում է Վանում պահպանված հին սովորույթի մասին, երբ կարիճի ձևով մանր ուլունքները շարում էին և կարում երեխայի գդակի (գլխարկի) կամ հագուստի վրա (Սրվանձտյանց 1978, 69): Հեղինակը անդրադառնում է նաև Վանի մոտ գտնվող սրբազան համարվող ծառերին. «ծառեր և թուփեր, որոնք սուրբ համարված են, գրեթե ամեն կողմը կը գտնվին» (Սրվանձտյանց 1978, 47):

Վասպուրականի 18-րդ դարի «Ծաղկախաչ» տիպի գորգն (ՀՊԹ, Ա 10101/4, 95× 55սմ, բուրդ, բամբակ, 1դմ² 2091) ունի կապույտ գորգադաշտ, վրան խաչաձև տեղադրված են ոճավորված կարմիր ծաղկաճյուղեր, արմավենյակներ, մեծ ու փոքր կարմիր վարդակներ, եզրերը ավարտվում են դեղին բամբակե ծոպերով: Գորգի լայն ու նեղ զարդագոտիները հարդարված են սպիտակ ալիքաձև գծերով և բաց կարմիր քառաթերթ ծաղկանախշերով:

Վասպուրականի 16–17-րդ դարերի գորգը (ՀՊԹ, Ա 10101/7, 435×175 սմ, բուրդ, 1դմ² 806) դասվում է «Ծաղկագորգերի» խմբին: Կապույտ հիմնադաշտը հարուստ հարդարված է կանոնավոր տեղադրված մեծ ու փոքր կրկնվող ծաղկանախշերով, վարդակներով, ծաղկաճյուղերով: Լայն շրջագոտին զարդարում են մեծ խաչաձև հիմքով ծաղկազարդերն ու թեքությամբ դասավորված ճյուղերը:

Իր հորինվածքային և պատկերազարդ նկարագրով ու արձանագրությամբ յուրահատուկ է և առայժմ եզակի ՀՊԹ, Ա 9282 գորգը (286 × 100սմ, բուրդ, բամբակ, 1դմ² 598) (նկ. 9): Այն գործվել է 1689թ. Վասպուրականի Արտազ գավառի Մակու քաղաքում և մեզ հասած տնայնագործական գորգերի լավագույն նմուշներից է: Նեղ կարմիր գորգադաշտի երկայնքով տեղադրված են բազմանկյուն վահաններ խաչերով ու խաչաձև նախշերով: Գորգադաշտն երիզող ու արտաքին նեղ գոտիները հարդարված են Վասպուրականի կիրառական արվեստի նմուշների վրա հաճախ հանդիպող օձանախշերով: Լայն դեղին շրջագոտին զարդարված է պտղաբերության գաղափարակիր վարսանդներով, ծիլերով, անձրևի խորհրդան-

շան՝ սանրաձև եռանկյունու պատկերներով: Շրջագոտու վերին հատվածում կա Քրիստոսի թվականով արաբագիր թվերով՝ «1689» և արաբագիր տառերով դժվար ընթեռնելի հիշատակագրություն՝«ՍՀԿԻՆՆ Է», այսինքն՝ «ՍԱՀԱԿԻՆՆ Է» (Գրությունը վերծանեցին Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝ Մատենադարանի աշխատակիցներ՝ Անի Ավետիսյանը, Քրիստինե Կոստիկյանը, Մովսես Խեչոն): Վառ կարմիրի գերակշռությամբ, բաց դեղին, կապույտ գույների համադրությունը, արաբագիր տառաձևերով հայերեն արձանագրությունը և Քրիստոսի թվականով արաբագիր թվականը այս գորգը դասում են եզակի նմուշների շարքին:

Գրավոր աղբյուրները հայկական միջնադարյան անկվածի և գորգերի մասին

Անկասկած գորգագործության և մանածագործության զարգացման վերելքի փուլերը ուղղակիորեն կապ ունեն Հայաստանով անցնող միջազգային առևտրական ուղիների ակտիվացման հետ: Անիի պեղումներից հայտնաբերված բրդյա կարպետի ու մետաքսյա կտորների հատվածները մեկ անգամ ևս հաստատում են դեռևս 10-րդ դարի արաբ աշխարհագիրների հաղորդած տեղեկությունները հայկական բրդյա, մետաքսյա, բամբակե գործվածքների՝ անկվածի ու գորգերի մասին: Իբն Հաուկալը թվարկելով Դվինում այծի նուրբ մազից (միրիզզա) և բրդից պատրաստվող գործվածքների տեսակները՝ գորգեր (բուսութ), բարձեր (վասաիդ), նստելու բարձեր (մակաիդ), ծածկելու (թամբի) գորգեր (անմաթ), տաբատի գոտիներ (տիրաք), նշում է, որ դրանք ներկվում են որդան կարմիրով (կիրմիզ), և հայտնի են հայկական արտադրանք (ասնաֆ ալ-արմանի) անվանումով: Իբն Հաուկալը «արմանի» է կոչում նաև հաստ գործվածքեղենը (բուտուտ), վարագույրները (սուտուր), երկար գորգերը (անխախ), կաշվե հենաբարձերը (մասավիր), ինչը «ոչ մի տեսակետից իր նմանը չունի աշխարհի որևէ մասում» (Տեր-Ղևոնդյան 2005, 599, 630): Ալ-Իսթահրին իր ուղեգրություններում հիշատակում է Դվինում արտադրվող բրդյա գորգերի, բարձերի երեսի (վասայիդ), հենաբարձերի (մակաիդ), գոտիների (տիքքա) և այլ՝«ասնաֆ ալ-արմանի» ապրանքների, ինչպես նաև Դվինից արտահանվող որդան կարմիրով (կիրմիզ) ներկված թելերի մասին (Տեր-Ղևոնդյան 2005, 574): Արաբ մատենագիրներ՝ Աս-Սաալիբին, Ալ-Մասուդին, Ալ-Մուքթադիրը, Յաղուբին և ուրիշները խոսում են հայկական գորգերի բրդի բարձրորակ լինելու մասին, որը ըստ Աս-Սաալիբիի, եգիպտական բրդից հետո առաջինն է: Բոլոր հեղինակները ընդգծում են, որ հայկական գորգի գեղեցկությունը պայմանավորված է նրա կարմիր գույնով, որը ըստ Ալ-Մասուդիի, կանանց, երեխաների և ուրախության գույնն է: Կարմիրը, նշում է Ալ-Մասուդին, ամենից լավն է աչքի համար, քանի որ կարմիր գույնից ընդարձակվում է աչքի բիբը (Мец 1973, 36):

Վերևում հիշատակված Դվինի թանկարժեք անկվածի ու գորգերի հարուստ տեսականին հետագայում շարունակեցին արտադրել Անի քաղաքում, որը 10–13-րդ դարերում Հայաստանի խոշոր արտադրատնտեսական քաղաքներից էր: Այն կարևոր դեր էր խաղում Տրապիզոնով ու Սև ծովով վենետիկցիների ու ջենովացիների հետ առևտուր վարելու գործում (Манандян 1954, 276): Ըստ Ն. Մառի, Անի քաղաքի

միջով էր անցնում առևտրական մեծ ուղիներից մեկը: Այդպիսով, Անին ժառանգել էր հայկական հնագույն քաղաք Դվինի միջազգային առևտրի մեջ ունեցած դերն ու նշանակությունը (Манандян 1954, 283): Հայր Ղ. Ալիշանը, խոսելով Ջենովայի և Հայաստանի միջև եղած առևտրական կապերի մասին, նշում է 13-րդ դարի սկզբին Ջենովայի քաղաքային հանրապետության և Կարսի միջև կնքած պայմանագրի մասին, որից հետո, 1257 թ. Ջենովայի պաշտոնյաներից մեկը ժամանում է Կարս առևտրական նպատակներով (Ալիշան 1893, 437–438: Манандян 1954, 283): Հայտնի է, որ վենետիկցի վաճառականները ակտիվ առևտուր էին անում Կիլիկիայի քաղաքներում, որտեղ հիմնական իրացվող ապրանքներից էր հայկական գործվածքը: Կիլիկիայում վենետիկցիների շահավետ առևտրի մասին են վկայում 1220–1340 թվականների առևտրական գործարքների վավերաթղթերը, որոնցում նշված են գնված առարկաների արժեքները: Օրինակ, 1307 թ. վավերաթղթի մեջ հիշատակվում են կարպետներ՝ 4 դր., 10 դր., 16 դր. արժողությամբ, մետաքսե վերարկու և գուլպաներ՝ 24 դր. արժողությամբ, պատանու մետաքսե շապիկ՝ 12 դր., բարձ՝ 2 դր., գեղեցկազարդ բաճկոն՝ 30 դր., ոսկեթել շրջազգեստ՝ 10դր., ոսկեթել մետաքսե քսակ՝ 2 դր. արժողությամբ, բազմաթիվ տեսակի կտորներ և դրանցից պատրաստված հագուստի մասեր (Պտուկեան 1963, 34–39): Հիշատակվում է նաև հայկական «buckram» հաստ կտավը[4], որի մասին վենետիկցի ճանապարհորդ Մարկո Պոլոն (1254–1324) գրում է, որ լավագույն «բոկարան» կտավը արտադրվում է Մեծ Հայքի Երզնկա (Արզինգա) քաղաքում (Марко Поло 1955, 56): Կոնիա, Կեսարիա, Սեբաստիա, քաղաքներին վերաբերող տեղեկության մեջ ճանապարհորդը նշում է, որ այդ քաղաքների բնակչության մեծ մասը հայերն ու հույներն են և այդտեղ են պատրաստում աշխարհի նրբագույն ու գեղեցիկ գորգերը, կարմիր և այլ գույների անկվածը (Марко Поло 1955, 56): Լ. Խաչիկյանի կարծիքով հայ խոշոր վաճառականները կապ ունեին Ղրիմի քաղաքների հետ: Դեռևս 13-րդ դարի սկզբին Ղրիմ էին արտահանում անեցիների արտադրած անկվածն ու գորգերը: Նրանք, առաջին հերթին Հոնենց ընտանիքը, ըստ Լ. Խաչիկյանի, Արծնի և Կարսի վաճառականների հետ միասին այդ վայրերում ունեին տնտեսական կապեր, առևտրական հենակետեր, պահեստներ, մշտական կայաններ, որոնք հետագայում վերածվեցին գաղութների (Хачикян 2014, 35–36): Հենց այստեղից էլ տեղի էր ունենում հայերի հոսքը դեպի Լվով, Կամենեց-Պոդոլսկ և այլ վայրեր (Хачикян 2014, 31): Այսպիսով, մետաքսի ճանապարհը անցնում էր նաև Հայաստանի վրայով դեպի Ղրիմ և հայտնի էր «Տրապիզոնյան ճանապարհ» անվամբ, որից բացառապես օգտվում էին հայերը: Ուշագրավ են 13-րդ դարի արձանագրություններում հիշատակվող Անիի արհեստավորների թաղամասերն ու դրանց անվանումները, որոնցից մեկը՝ Կատտնոցը համարվում էր գորգագործների և թաղիքագործների փողոց (Հայ ժողովրդի 1976, 565): Բացառված չէ, որ տվյալ ժամանակաշրջանում այդպիսի թաղամասեր և գորգագործական արհեստանոցներ լինեին Հայաստանի այլ քաղաքներում ևս:

[4] Buckram կամ buckaram, կամ բոկարան՝ կտավ բամբակյա կամ վուշե կտորից, որն օգտագործվում էր վարագույրներ, ծածկոցներ, դրոշներ, գրքի կազմեր ու ներդիրներ պատրաստելու համար:

Հիմնվելով բազմաթիվ վկայությունների վրա, միանշանակ կարող ենք ասել, որ Դվինում, հետագայում նաև Անիում, բրդյա կտորների ու գորգերի պատրաստման ակունքները գալիս են դեռևս Վանի թագավորության ջուլիականոց-արհեստանոցներից: Այդ մասին են վկայում Կարմիր բլուրից հայտնաբերված անկվածի և խավով գործվածքի նմուշները Верховская 1955, 67–71): Վանում բրդյա բարձրորակ գործվածքների պատրաստումը ավանդաբար շարունակվել է մինչև 1915 թ.: Տեղին է հիշել Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու (921 թ.) այն բարձրաքանդակը, որտեղ Գագիկ I Արծրունի թագավորը բազմած է պատկերազարդ բարձի կամ գորգի վրա: 13-րդ դարի աշխարհագիր Յակուտը (1178–1229) մեջբերում է 9-րդ դարի ճանապարհորդ Աբու Ամֆիի վկայությունը Վանում գործվող գորգերի մասին (Թեմուրճյան 1955, 32): 982 թ. պարսիկ անանուն աշխարհագիրը խոսում է Բերկրիի, Արճեշի, Ախլաթի (Խլաթ), Նախիջևանի, Խոյի և Բաղեշի (Բիթլիսի) բարգավաճ, բազմամարդ, փոքր ոստանների մասին՝ շեշտելով, որ այդտեղ կան հարստություն և վաճառականներ և արտադրվում են մեծ քանակությամբ զիյլու-գորգեր (զիյլու-հա-էյի գալի), ինչպես նաև աղոթագորգեր (Քիւրտեան 1947, 63): Ամենայն Հայոց կաթողիկոս Հովհաննես Ե Դրասխանակերտցին (840-ական–929) հաղորդում է, որ Երազգավորսում գտնվող Սմբատ Բագրատունուն հարուստ նվերներ են ուղարկում, որոնցում «...երևելի զարդս հանդերձանաց, և նկարակերտ կազմուածս բազմականաց կարմրությամբ որդանց ...» (Դրասխանակերտեցւոյ 1912, 198): Հայտնի չէ, որտեղ են գործվել այն գորգերը, որոնք նվեր են ուղարկվել Սմբատ Բագրատունուն: Հայտնի է, որ նշված գորգերը Սմբատ Բագրատունուն ուղարկել էր արաբ կառավարիչ Յուսուֆը, որը Վասպուրականի թագավոր Գագիկ I Արծրունու դրացին և մտերիմն էր: Յուսուֆին էլ իր հերթին թանկարժեք նվերներ էին մատուցում հայերը, այդ թվում գորգեր, որոնք ինչպես նշվում է ներկված էին որդան կարմիրով և հնարավոր է պատրաստվել էին Վասպուրականում: Նույնիսկ 1885 թ. Կոստանդնուպոլսում հրատարակվող «Մասիս» ամսագրում նշվում է, որ «տիրող գույնը Վասպուրականում կարմիրն է» (Քուրտեան 1947, 131): Նշենք, որ մինչև 1914 թ. Վասպուրականում բրդյա մանած թելի փաթույթները ներկում էին որդան կարմիրով, եռացնելով 10–12 ժամ, ամեն փաթույթի համար օգտագործելով 20 գրամ որդան կարմիր և 40 գրամ գինու մրուր (Լալայեան 1914, 195): Թուրք ճանապարհորդ Էվլիյա Չելեբին հաղորդում է, որ 17-րդ դարի առաջին կեսին Վանի քարայրներից մի քանիսում մետաքսագործական արհեստանոցներում վարպետները ճախարակներով պատրաստում էին մետաքսյա, բամբակյա, բրդյա թելեր: Նա խոսում է նաև վանեցիների գույնզգույն շալ կամ բրդյա հագուստի մասին (Չելեբի 1967, 233, 243): 17-րդ դարի պատմիչ Առաքել Դավրիժեցին, անդրադառնալով Խոշաբի բերդի Սուլեյման բեկի կողմից Վարագա վանքի կողոպուտին, գրում է, որ Սբ. Նշան եկեղեցու գանձերի մեջ կային թանկարժեք գործվածքներ: Հեղինակը հիշատակում է նաև 17-րդ դարի Վան քաղաքի մեծահարուստ վաճառականների անունները: Հայկական գորգերի արժեքավոր լինելու վավերագրերից է Իբն Խալդունի հիշատակած՝ արաբներին տրվող բնահարկի 8-րդ դարի ցուցակը, որտեղ ասվում է, որ Հայաստանը տարեկան քսան գորգ (բուզուտ մահֆուրա) պետք է ուղարկեր Բաղդադի խալիֆին, որպես հարկ (Գանցիորն 2013, 17–18):

Գորգագործության զարգացման վերելքը, ինչպես նշեցինք, պայմանավորված էր առևտրի աշխուժացմամբ, արհեստների զարգացմամբ, համքարությունների առաջացմամբ: Ուշագրավ են նաև հայ հեղինակների տեղեկությունները միջնադարյան կտորների ու գորգերի տեսակների վերաբերյալ: Օրինակ՝ Մխիթար Գոշի (12–13-րդ դարի սկիզբ) «Դատաստանագրքում» հիշատակվում է պաշտոնյաների թանկարժեք կերպասներից հագուստը (Гош 1954, 126–127): Իսկ պատմիչ Կիրակոս Գանձակեցին (1202–1271) Գետիկի հռչակավոր վանքի բացման առիթով Հաթերքի իշխան Վախթանգի կնոջ՝ Արզուխաթունի պատրաստած խորանի վարագույրի մասին գրում է, որ այն այծի փափուկ աղվամազից հյուսված վարագույր է, ներկված պես-պես գույներով, քանդակաձև ու նկարված՝ Փրկչի ու այլ սրբերի պատկերներով: Պատմիչի խոսքով՝ «Ովքեր տեսնում էին (վարագույրը), աստծուն օրհնություն էին տալիս, որ կանանց ոստայնանկության իմաստություն ու նկարակերտության հանճար տվեց» (Գանձակեցի 1982, 156–157): Է. Չելեբին գրում է Բարձր Հայքի Բաբերդ (Բայբուրթ) քաղաքում արտադրվող կարպետների մասին (Չելեբի 1967, 126): Կեսարիայի մասին նա ասում է. «այս քաղաքում բոլոր տեսակի արհեստները զարգացած են և նրանց արտադրանքը հայտնի է» (Չելեբի 1967, 148): Իսկ Բաղեշի (Բիթլիսի) խան Մելեք Ահմեդ փաշային ուղարկված ընծաների մասին Է. Չելեբին գրում է, որ դրանց մեջ էին երեք՝ մետաքսով և ոսկեթելերով գործված Սպահանի խալի, երեք՝ Նախիջևանի գորգ (Չելեբի 1967, 206): Լ. Խաչիկյանը, վերլուծելով 14-րդ դարի «Բրդի մշակման մասին տրակտատը», կարևոր եզրահանգումներ է անում միջնադարյան Հայաստանում մանուֆակտուրային տիպի կապիտալիստական ձեռնարկության կառուցվածքի ու բնույթի մասին: Հիշված տրակտատում տեղեկություններ կան առ այն, որ բրդի հումքը Ֆլորենցիա Անգլիայից, Ֆրանսիայից, Թունիսից, Իսպանիայից, Լևանտյան երկրներից բացի ներմուծվում էր նաև Հայաստանից (Խաչիկյան 1999, 300–301), իսկ Երզնկայի ճարտար մանածագործները 13–14 դարերում հյուսում էին «աշխարհի լավագույն բեհեզները» (Մարկո Պոլո) և «իր անունով կոչվող գեղեցիկ կերպասները» (Յակուտ, Իբն-ի Բատուտա) (Խաչիկյան 1999, 302): Հայտնի է նաև, որ ֆեոդալական ու վանական խոշոր տնտեսություններն իրենց անհրաժեշտ արհեստագործական արտադրանքի մի մասը ձեռք էին բերում ոչ թե քաղաքային շուկաներից, այլ դղյակներին ու վանքերին կից արհեստանոցներից (Խաչիկյան 1999, 305): Արցախի և Սյունիքի գորգագործական կենտրոնները Մաղավուզ, Վանք, Տող, Խնձորեսկ և այլ մելիքանիստ ավաններ ու վանքապատկան գյուղեր էին: Խոշոր վանքերին կից արհեստանոցների մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում պատմիչ Ս. Օրբելյանը (13-րդ դար): Խոսելով Տաթևի վանքի շինության առանձին փուլերի մասին՝ նա նշում է, որ այնտեղ կառուցվել են «գաղտանոցս գետնափորս ի ներքոյ վանիցն՝ ծածուկ երկրաւ, բազում տունս և դարանս ի պէտս եկեղեցւոյն... և սրբաշէն տրապէզս և գործատներս. համբարանոցս և սրբարանս և գրատունս»: Կամ՝ «շինէ (թագուհին Սիւնեաց Շահանդուխտ) և ...զհամբարանոցս և գործատունս և շուրջ պարսպէ զվանքն» (Խաչիկյան 1999, 305): Սյունիքի եպիսկոպոսների օծման արարողությունը նկարագրելիս Ս. Օրբելյանը գրում է, թե ինչ խնդությամբ դիմավորեցին կաթողիկոսին, ուղեկցեցին դեպի Սյունիքի իշխանների գա-

հատեղին՝ «խորանն արքունական» և նստեցրին ոսկեթել ու մարգարտազարդ բազմականով ծածկված գահին (Օրբելյան 1986, 110):Արհեստները միջնադարյան Հայաստանի քաղաքներում, անտարակույս, կազմակերպված են եղել համքարական սկզբունքներով (Խաչիկյան 1999, 306): Մեծ հավանականությամբ կարելի է ասել, որ այդ արհեստավորների մի մասը հոգևորականներ էին: Ինչպես կարելի է եզրակացնել Հակոբ Ա Կլայեցի կաթողիկոսի (1268–1286) «Մեկնութիւն նուրբ գրեանց» անտիպ աշխատության էջերից. «Յատուկ ամենայն վանաց ամենայն եղբարց արուեստ որոշել չէ պարտ: Վասն զի ոմն վանուց այս ինչ պիտոյ է և ոմն՝ այս ինչ. և է արուեստաւոր մի վանիցն չգայ ի պէտք վասն նիւթոցն անպատրաստութեան և դժուարագիւտ լինել(ոյ), բայց այլում տեղւոջ՝ նիւթն առատ և պիտանի եղբարցն և դիւրավաճառ»: Շարունակության մեջ կաթողիկոսը պահանջում է կղերական արհեստավորներից «չզբաղուել պերճանքի իրերի, ոսկեկար գործուածքների և այլ թանկարժէք ապրանքներիարհեստագործութեամբ...» (Խաչիկյան 1999, 305–306): Երզնկայի արհեստավորաց «եղբայրության» կանոնադրությունը վկայում է, որ 13-րդ դարի Հայաստանի մի շարք քաղաքներում կանոնադրությունով ամրագրված արհեստակցական միություններ էին գործում, որտեղ դրանք կազմավորվում և ղեկավարվում էին հոգևոր դասի կողմից: Օրինակ, Երզնկայի 1280 թ. ստեղծված «եղբայրությունը» ղեկավարվում էր Գրիգոր վարդապետ Սանահնեցու կողմից, իսկ կանոնադրություն՝«Սահմանք և կանոնքը» կազմել էր Հովհաննես վարդապետ Երզնկացին (Խաչիկեան 1995, 202): Կարևոր է նաև Մարկո Պոլոյի տեղեկությունն այն մասին, որ Երզնկայում ապրում էր արքեպիսկոպոսը (Марко Поло 1955, 56): Հայտնի է, որ համալսարանական, միջին և տարրական կրթությունը, ինչպես նաև անհրաժեշտ մասնագիտական գիտելիքները միջնադարում բացառապես ձեռք էին բերվում հոգևոր կենտրոններում կամ վանական համալիրներում: Նշենք նաև, որ 13–14 դարերում Երզնկայով էր անցնում կիլիկյան Այաս նավահանգստից Սվազով դեպի Թավրիզ ընկած առևտրական ճանապարհի կարևոր հատվածը (Манандян 1954, 287, 289, 291, 292, 296–297): ֆլորենտացի ճանապարհորդ Բալդուչի Պեգոլոտին (14-րդ դարի սկիզբ) հայտնում է, որ Arzinga-Երզնկան միջազգային նշանակության առևտրականկարևոր ուղիներից մեկի կայանն էր: Հեղինակը մեջբերում է արաբ ճանապարհորդ Իբն-Բատուտայի տեղեկությունն այն մասին, որ Երզնկայում արտադրում էինհրաշալի կտորներ (Манандян 1954, 306): Ըստ Լ.Խաչիկյանի, Վասպուրականի քաղաքներից մեկը (խոսքը հավանաբար Վանի մասին է) նույնպես ունեցել է համքարական կազմակերպություն (Խաչիկյան 1951, 73): Կտուց անապատում ընդօրինակված Հայսմավուրքի գրիչ Խաչատուրը 1462 թ. հիշատակություն ունի ձեռագրի ստացողի մեծ պապ «ախի (եղբայր) Կարապետի» մասին: Արաբ ճանապարհորդ Իբն-Բատուտան 1332 թ. նույնպես գրում է «ախիների» մասին (Խաչիկյան 1951, 77), որը վկայում է Վանում «եղբայրությունների»՝ համքարական միությունների գոյության մասին: Շատ ավելի սակավ են տեղեկությունները ֆեոդալական դղյակներին կից գործատների մասին: Հիմք կա ենթադրելու, օրինակ՝ Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան, որ կոչի ձմեռան հետո»-ից, որ գործատներում բանում էին ծառաներ, որոնք արհեստներ

գիտեին (Խաչիկյան 1995, 202)։ Հայտնի է, որ արհեստավորներն իրենց աշխատանքի վարձը հիմնականում ստանում էին դրամով (Խաչիկյան 1995, 313)։

Հայկական միջնադարյան անկվածի և գորգերի ստեղծման կենտրոններից էր Շամախի քաղաքը։ 15-րդ դարի վենետիկցի ճանապարհորդներ Ջոսավատ Բարբարոն (1413–1494) և Ամբրոջիո Կոնտարինին (1429–1499), լինելով Շամախիում, գրում են, որ այստեղ կա 4–5 հազար տուն և բնակիչները հիմնականում հայեր են, որոնք տեղում արտադրում են «թալաման» կամ « դեհլեմին» կոչված մետաքսյա կտորներ, կտավներ։ 1560-ական թվականների անգլիացի հեղինակ Էդուարդսը խոսում է, թե ինչպես Շամախիի և շրջակա հայկական գյուղերի բնակիչները մետաքսի առևտուր են անում Հալեպում վենետիկցիների հետ. «մեկ հայկական գյուղը, — գրում է Էդուարդսը, — ամեն տարի 400, 500 ջորի բարձած մետաքս է տանում Հալեպ, իսկ այնտեղից բերում է վենետիկյան մահուդ» (Погосян 2013, 47)։

Ուշագրավ են Է. Չելեպիի տեղեկությունները Փոքր Հայքի Մարզվան գավառում պատրաստվող նուրբ բամբակե կտորների, կապույտ ներկի, ներկարարների մասին։ Նա նշում է, որ կապույտով ներկված այս կտորները վաճառականները յուրաքանչյուր տարի տեղափոխում էին Ղրիմ գերիների հետ փոխանակելու համար։ Այդ կտորից էլ Ղրիմի ժողովուրդը կարում էր փարաջա և հագուստ (Չելեբի 1967, 139–140; Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան 1991, 730–731)։

Փոքր Ասիայում թանկարժեք մետաքսյա կտորների և թավշի արտադրության կենտրոններից էր Բուրսա քաղաքը։ Փաստագրերը հաստատում են սուլթան Սելիմ I (1467/68–1520) ժամանակներում Բուրսա քաղաքի մանածագործական արդյունաբերության կենտրոն լինելու մասին, որտեղ ջուլհակ են եղել մեծ թվով շիա դավանանքի վարպետներ։ Շիա դավանանքի արհեստավորներին արտաքսել են կամ ոչնչացրել, իսկ նրանց ունեցվածքը բռնագրավել։ Հավանաբար, այդ իրադարձություններից հետո թանկարժեք անկվածի և մետաքսյա կտորների արտադրության իրավունքը Բուրսայում փոխանցվել է հայ վարպետներին (Փափազյան 1969, 242)։

Կարևոր են 14–15-րդ դարերի այն հուշագրերը, որտեղ հիշատակվում են հայ արհեստավոր վարպետները՝ մետաքս մշակող խազազները (հշտկ. №321, էջ 253), մետաքսյա կտոր արտադրող կերպասագործները (հշտկ. №177, էջ 135), վուշից և բամբակից կտավ արտադրող կտավագործները (ԺԵ. դարի հշտկ. 1955, 363, 365), ներկարարները (հշտկ. №214, էջ 167, №337, էջ 265), ոստայնանկ-ջուլհակները (Ջուղ.), ջուլհակ-մանածագործները և գորգագործները (հշտկ. №31, էջ 25), նաղաշնկարիչները։ Արխիվային փաստաթղթերից հայտնի է, որ թուրքերը սուլթան Սուլեյման Գանունի գլխավորությամբ 1548 և 1554 թվականներին Արարատյան հովտից, Վասպուրականից, Երևանից, Նախիջևանից, Արցախից բռնությամբ տեղահան են անում մի քանի տասնյակ հազար հայերի, քշելով նրանց դեպի Փոքր Ասիա և Կոստանդնուպոլիս (Ալպոյաճեան 1937, 664–665)։ 17-րդ դարի սկզբից էլ Փոքր Ասիայի քաղաքներում, օրինակ՝ Ջիլեռում, սկսում են պատրաստել գորգեր, վիշապի պատկերով կարպետներ։ Դրանք հարունման են այն գորգերին ու կարպետներին, որոնք ավելի վաղ՝ մինչ տեղահանությունը, գործվել են Նախիջևանում, Վաս-

պուրականում, Արցախում: Ըստ Ա. Ալպոյաճեանի, վիշապի հայտնի պատկերով կարպետները Ջիլեում սկսել են արտադրել 17-րդ դարից (Ալպոյաճեան 1952, 578, 580): Հեղինակը գրում է, որ հայերը 17–20-րդ դարի սկիզբը Թոգատում արտադրում էին վառ ու դիմացկուն ներկերով ներկված բարձրարվեստ վարագույրներ, դաջազարդ գլխաշորեր, կարպետներ (Ալպոյաճեան 1952, 1340): Ֆրանսիացի ճանապարհորդ Ժ.-Բ. Տավերնյեի (1605–1689) դիտարկմամբ Թոգատից մինչև Թավրիզ տարածքը զբաղեցնում էր մի երկիր, որը հնում անվանվում էր «Արմենիա» և բնակեցված էր միայն քրիստոնյաներով, իսկ քաղաքներում ժողովրդագրական նկարագիրն ուներ հետևյալ պատկերը՝ մահմեդականների և հայերի հարաբերակցությունը 1/50 էր (Хачикян 2004, 124):

Կարևոր նշանակություն ունեն 17–18-րդ դարերի հայ վաճառականների առևտրական օրագրերում և հաշվեմատյաններում Ռուսաստան և Եվրոպա արտահանվող թանկարժեք կտորների, մանածագործական առարկաների, գորգերի անվանումները: Օրինակ՝ մետաքսի տեսակ «ադամաշկա», ուղտի բրդից պատրաստված կտոր ու վերնազգեստ «արմյակ», կերպաս «ասպրա», նուրբ մետաքսյա կտոր «տաֆտա», «ատլաս», «բարխատ», ոսկյա և արծաթյա թելերից հյուսված «պարչա», ոսկեթել և արծաթաթել հյուսքով կտավահյուս «զարբաֆ» կամ «շարբաֆ», կտորի դաշտի գույնին համահունչ զարդապատկերներով կտոր «կամկախ», ալ կարմիր մահուդ «կարմազին», դաջազարդ կտոր «կինդյակ», մեղրամոմով պատված կտավ «վոշչանկա», բուրսայի գոտի «քուշակ», գորգագործ ձիու ծածկոց «չեպրակ» և այլն (Армяно-русские 1953, 259–270; Շահվելի 1994, 34, 41, 88): Նշենք, որ Եվրոպա ապրանքը արտահանում էին հիմնականում թուրքական, պարսկական, արաբական անուններով հայ վաճառականները: Առևտրական փաստաթուղթ՝ «վասիկաններից» իմանում ենք Մուրադ, Բուդաղ, Շահ-Բուլաղ, Սուլթան և այլ հայկական առևտրական ընտանիքների մասին: Նրանք նաև թրքախոս էին: «Türksanayive Ticaret Tarihin de Bursada Ipekcilik» գրքի հեղինակ Ֆահրի Դալսարը անհիմն ու անհավանական եզրահանգումներ է անում, ասելով, որ 15–17-րդ դարերի «վասիկաններում» հիշատակվող հայ վաճառականները իրականում քրիստոնեություն ընդունած թուրքեր են (Փափազյան 1969, 241):

Մանածագործական և գորգագործական արհեստների զարգացման համար մեծ խթան հանդիսացավ Շահ Աբբաս I-ի (1587–1629) ժամանակ՝ 1619 թ. աճուրդին «Հայ առևտրական ընկերության» վաճառականների կողմից Պարսկաստանի մետաքսի և այլ ապրանքների արտահանման և համաշխարհային առևտրի իրավունքի ձեռքբերումը (Բայբուրդյան 2007, 54): 1667 թ. մայիսի 31-ին Մոսկովյան թագավորության հետ կնքած պայմանագրի շնորհիվ «Հայ առևտրական ընկերության» վաճառականները արևելյան ապրանքներն ու հում մետաքսը սկսեցին արտահանել Եվրոպա Ռուսաստանի տարածքով (Փափազյան 1969, 246):

1689 թ. պայմանագրով հայերը ձեռք են բերում Ռուսաստանի տարածքում արևելյան ապրանքների և հում մետաքսի առևտրի մենաշնորհի իրավունքը: Ջուղայեցի վաճառական Սարհադ Բանդորյանի 1711–1718 թվականների առևտրական գործարքների հաշվեմատյանում խոսվում է հայկական 21 գորգերի մասին, որոնք նա վաճառել է Սարատովից դեպի Մոսկվա ընկած ճանապարհին: Յուրա-

քանչյուր գորգի արժեքն է 2000 դինար (10 արծաթ): Մոսկվայում նա վաճառում է 31 գորգ, յուրաքանչյուրի գինը՝ 3000 դիան (15արծաթ) (Շահվելի 1994, 37–38): Հիշատակվում են նաև մետաքսյա գործվածքները և դրանց գնային արժեքները: Օրինակ՝ խոջա Սարհադը Ամստերդամում վաճառել է 2 հակ Շամախու հայտնի «շարբաֆ» թանկարժեք մետաքսյա կտոր և 1 հակ հում մետաքս (Շահվելի 1994, 88): Վաճառականների հետ միասին դեպի Եվրոպա և Ռուսաստան մեկնում են հայ մանածագործ և գորգագործ վարպետներ, ովքեր 17–18-րդ դարերում մի շարք երկրներում՝ Ռուսաստանում, Լեհաստանում մետաքսյա կտորների ու գորգերի արտադրություններ են հիմնում: Օրինակ՝ 1668–1669 թվականներին Պարսկաստանից Մոսկվա են ժամանում հայ գորգագործներ ու մանածագործներ (Армяно-русские 1953, 67–68):

1720 թ. ջուղայեցի Իգնատի Ֆրանցն Շերիմանը (Շահրիմանյան) Մոսկվայից Ֆրյանովո է տեղափոխում իր մետաքսագործական ֆաբրիկայի մի հատվածը, որը 1758 թ. Զաքար Շահրիմանյան-Շերիմանը վաճառում է Լազար և Պետրոս Նազարովիչ-Լազարյաններին (Савицкая 1974, 74–75): Հայտնի է, որ Լազարյանների ֆաբրիկայում արտադրվում էր 22 նմուշ դեկորատիվ կտոր, որոնց այուժեներում ու զարդաձևերում ներկայացված էին մարդկանց, կենդանիների պատկերներ, ծաղկանախշերով բազմաթիվ հորինվածքներ և այլն (Савицкая 1974, 76):

Դեռևս 1758 թ. իշխան Միխայիլ Կազիմիր Ռաձիվիլլի (1702–1762) կառավարման ժամանակ Նեսվիժե հրավիրվում է մետաքսյա թանկարժեք գոտիների պատրաստման հայ բարձրակարգ վարպետ Հովհաննես Մաջարյանը (Ioannes Madzarski), որը քիչ անց սկսում է ոսկեթել ու արծաթաթել մետաքսյա գոտիների արտադրությունը Սլուցկում, որտեղից էլ գոտիները հայտնի են «սլուցկի գոտիներ» անվամբ: Գոտիների գեղարվեստական առանձնահատկություններից էր վրայի նշումը՝ «SŁUCKE» և «IOANNES MADZARSKI», հետագայում նրա որդու Լեոն Մաջարսկու ժամանակ՝ «ЛЕО МА/ЖАРСКІЙ ВЪ ГРДЪ/СЛУЦКЪ» կամ «Ф.К.Ц.Р./СЛУЦКЪ» նշումները (Скворцова 2013, 191–197):

Այսպիսով, ՀՊԹ գորգերի հավաքածուի 13-րդ դարի անկվածի ու 16–18-րդ դարերի գորգերի թանկարժեքն մուշները, հայ և օտար պատմիչների, աշխարհագիրների, ճանապարհորդների տեղեկությունները, արխիվային փաստաթղթերն ու առևտրական գործարքների հաշվեմատյանները, որպես հավաստի և կարևոր աղբյուրներ, վկայում են հայկական միջնադարյան մանածագործության ու գորգագործության զարգացման բարձր աստիճանի մասին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Թանգարանային առարկաներ

ՀՊԹ, Ա 8968
ՀՊԹ, Ա 9282
ՀՊԹ, Ա 10101/1
ՀՊԹ, Ա 10101/2
ՀՊԹ, Ա 10101/4
ՀՊԹ, Ա 10101/6
ՀՊԹ, Ա 10101/7
ՀՊԹ, Ա 11767
ՀՊԹ, Հ 123–1121
ՀՊԹ, Հ 123–1128
ՀՊԹ Հ 123–1129
ՀՊԹ, Հ 123–1140
ՀՊԹ, Հ 2010–153

Գրականություն

Աբրահամյան 1956 – Աբրահամյան Վ., Արհեստները Հայաստանում IV – XVIII դդ., Երևան, 1956:

Ալպոյաճեան 1937 – Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, Գահիրէ, 1937

Ալպոյաճեան 1952 – Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, Գահիրէ, 1952:

Անի 2015 – Անի. հազարամյա մայրաքաղաք հայոց, Կատալոգ-ալբոմ, Հայաստանի պատմության թանգարան, Երևան, 2015:

Դավրիժեցի 1988 – Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988:

Առաքելյան 1958 – Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IX – XIII դդ., Երևան, 1958:

Բայբուրդյան 2007 – Բայբուրդյան Վ., Նոր Ջուղա, Երևան, 2007:

Գանցիոռն 2013 – Գանցիոռն Ֆ., Քրիստոնեա-արևելյան գորգը, Երևան, 2013:

Գևորգյան 1973 – Գևորգյան Ա., Արհեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում, Երևան, 1973:

Չելեբի 1967 – Էվլիյա Չելեբի, Ուղեգրություն, Թուրքական աղբյուրներ, Գ, Երևան, 1967:

Թեմուրճյան 1955 – Թեմուրճյան Վ., Գորգագործությունը Հայաստանում, Երևան, 1955:

Ժամկոչյան 1992 – Ժամկոչյան Ա., Կիրառական արվեստի նմուշներ Անիից, Անի, № 3 – 4, Երևան, 1992, էջ 81 – 85:

Խաչիկյան 1955 – ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (1401 – 1450 թթ.), Ա, Կազմեց Լ. Խաչիկյանը, Երևան, 195:5

Լալայեան 1914 – Լալայեան Ե., Տնայնագործությունը Վասպուրականում, Ազգագրական հանդէս, XXV գիրք, Թիֆլիս, 1914, էջ 189 – 215:

Խաչիկեան 1995 – Խաչիկեան Լ., 1280 թուականին Երզնկայում կազմակերպուած «եղբայրութիւնը», Աշխատութիւններ, հ. Ա, Երևան 1995, էջ 200 – 215:

Խաչիկյան 1999 – Խաչիկյան Լ., Արհեստագործության վիճակն ու զարգացման աստիճանը Հայաստանում X – XIV դարերում, Աշխատութիւններ, հ. Բ, Երևան, 1999, էջ 296 – 315:

Գանձակեցի 1982 – Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982:

Հակոբյան 1991 – Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1991, էջ 730 – 731:

Հայ ժողովրդի 1976 – Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976:

Ալիշան 1893 – Ղևոնդ Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893:

Մաթևոսյան 1994 – Մաթևոսյան Ռ., Հայկական զինանշաններ, Երևան, 1994:

Օրմանեան 1993 – Մաղաքիա արք. Օրմանեան, Հայոց եկեղեցին, Երևան, 1993:

Մուշեղյան 1982 – Մուշեղյան Ե., Անի քաղաքի պեղումներից հայտնաբերված առարկաները, Հատկանշական ցուցակ թանգարանային առարկաների, Պրակ II, Երևան, 1982: Դրասխանակերտեցւոյ 1912 – Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:

Շահվելի 1994 – Շահվելու որդի Սահրադի հաշվեմատյանը, Երևան, 1994:

Պտուկեան 1963 – Պտուկեան Ջ., Կիլիկեան Հայաստանի դրամները, Վիեննա 1963:

Օրբելյան 1986 – Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986:

Սրվանձտյանց , 1978 – Սրվանձտյանց Գ., Գրոց ու բրոց, Երկեր, Հատոր առաջին, Երևան, 1978, էջ 35 – 88:

Տեր-Ղևոնդյան 2005 – Տեր-Ղևոնդյան Ա., Արաբ մատենագիրներ, Թ – Ժ դարեր, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 16, Երևան, 2005:

Փափազյան 1969–Փափազյան Հ., Հայերի դերը Թուրքիայի մետաքսագործության մեջ և 1729թ. Թավրիզում կնքված համաձայնագիրը, Բանբեր Մատենադարանի №9, Երևան, 1969, էջ 241–253:

Քուրտեան 1947–Քուրտեան Յ., Գորգը հայոց մօտ, Վենետիկ, Ս-բ. Ղազար, 1947:

Армяно-русские 1953–Армяно-русские отношения в XVII веке, Ереван, 1953.

Гош 1954–Армянский Судебник Мхитара Гоша, Памятники древнеармянской литературы, II, Ереван, 1954.

Верховская 1955–Верховская А., Текстильные изделия из раскопок Кармир-блура, Кармир-Блур, III, Ереван, 1955, с.67–71.

Гомбош 1978–Гомбош К., Старинные армянские ковры с драконами, II Международный симпозиум по армянского искусства, Ереван, 1978 , с.1–4.

Джанполадян 1972–Джанполадян Р.М, О двух тканях из Ани и Болгар, Краткие сообщения института археологии АН СССР (КСИА), N 132, Москва, 1972 , с.46–52.

Иерусалимска 2005–Иерусалимская А., Словарь текстильных терминов, Санкт -Петербург, 2005.

Исаев 1932–Исаев М., Ковровое производство Закавказья, Тифлис, 1932.

Манандян 1954–Манандян Я., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времён, Ереван, 1954.

Марко Поло 1955–Марко Поло, Книга путешествий, Москва 1955.

Марр 1939–Марр Н., Ани, Ереван, 1939.

Мец 1973–Мец А., Мусульманский ренессанс, Москва, 1973.

Николаева 2017–Николаева О.,Чесуча: разнообразие шелковых традиций, pro Ткани. com, 12 янв. 2017, смотрела 17.03.2021.

Орбели 1910–Орбели И., Каталог Анійскаго Музея Древностей, С.-Петрбургъ, 1910.

Орбели 1910–Орбели И., Путеводитель по городищу Ани, С.-Петербург, 1910.

Пиотровский 1950–Пиотровский Б., Кармир-Блур, III, Ереван, 1950.

Пиотровский 1952–Пиотровский Б., Кармир-Блур, III, Ереван, 1952.

Пиотровский 1955–Пиотровский Б., Кармир-Блур, III, Ереван, 1955.

Ибн-Фадланана 1939–Путешествие Ибн-Фадланана на Волгу, Москва, 1939.

Погосян 2013–Погосян Г., Армяне Шамахи в упоминаниях некоторых западноевропейцев,Часть I, Ерееван, 2013.

Савицкая 1974–Савицкая А., О шёлковых тканях фабрики Лазаревых в собрании Русского музея, Сообщения Гос. Русского музея, X, Москва, 1974, с.73–76.

Скворцова 2013–Скворцова И., К вопросу о датировке слуцких поясов, Художественная культура армянских общин на землях Речи Посполитой, Минск, 2013, с.191–205.

Хачикян 2014–Хачикян Л., Армяне в древней Москве и на путях ведущих в Москву, Ереван, 2014.

Gantzhorn 1998–Gantzhorn V., Orientalishe Teppiche, Koln, 1998.

Kyurkchyan 2016–Kyurkchyan A., Armenian block printed fabric, Yerevan, 2016.

Lilia Avanesyan
PhD in History
History Museum of Armenia
lilia.a65@mail.ru

DATA ON ARMENIAN TEXTILE AND CARPET WEAVING ART OF THE 13th–18th CENTURIES

(based on materials of the HMA)

Keywords: Textile, rug, carpet, silk, trade, merchant, craft guild.

Armenian medieval fabrics and carpets have a special place in the collection of the History Museum of Armenia. They are valuable finds from the city of Ani dating back to the early 13th century: the girl's silk dress/ outfit, the covers of a deceased with gold thread embroidery, the parts of dark red silk fabric, dark brown knotted velvet, woollen carpet, etc. In the group of carpets pile and lint-free fabrics of the 16th–18th centuries stand out. The decoration and the quality of these objects indicate that they were made in special workshops. According to the sources of the 13th century, those were unions of craftsmen, who acted according to a charter and were called "brotherhoods".

Arabic sources of the 10th–13th centuries, trade documents of the early 14th century from Cilicia, Turkish accounting documents of the 16th century called "vasikans", documents of 17th century of "Armenian Trading Company", trade diaries of merchants of the early 18th century contain the most important information on Armenian expensive fabrics and carpets, the centers of their production and market prices.

Лилия Аванесян
Кандидат исторических наук
Музей истории Армении
lilia.a65@mail.ru

СВЕДЕНИЯ ОБ АРМЯНСКОМ ИСКУССТВЕ ТЕКСТИЛЬНОГО ПРОИЗВОДСТВА И КОВРОТКАЧЕСТВА 13–18-го ВВ.

(по материалам МИА)

Ключевые слова: Текстиль, ковер, карпет, шелк, торговля, купец, цеховое объединение.

В коллекции Музея истории Армении особое место имеют средневековые ткани и ковры. Это ценные находки из раскопок города Ани, датируемые началом 13-го в.: детское шёлковое платье, погребальные шёлковые покрывала вышитые золотом, куски темно-красной шёлковой ткани, тёмно-фиолетового петельчатого бархата, шерстяного карпета и т. д.

В группе ковров выделяются ворсовые и безворсовые ковры 16–18-го вв. Художественное оформление и качественные свойства этих изделий свидетельствуют, что они были изготовлены в специальных мастерских, которые, согласно источникам 13в., были цеховыми объедениниями и назывались «братством». Наиболее важные сведения о дорогих тканях и ковровых изделиях, центрах их производства, о рыночной цене содержатся в арабских источниках 10–13-го вв., киликийских торговых документах нач. 14-го в., турецких учётных документах–«васиканах» 16-го в., документах «Армянской торговой компании» 17-го в., торговых дневниках купцов начала 18-го в.